ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9.4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական տուրքի գումարը հայցվորի կողմից նախապես վճարվել է, իսկ հայցը ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50,000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Անդրադառնալով փաստաբանի խելամիտ վարձատրության հարցին՝ Դատարանն արձանագրում է, որ «Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի և «Աննարկա» ՍՊԸ-ի միջև 20.11.2023 թվականին կնքված թիվ 12/23 հանձնարարության պայմանագրի համաձայն՝ հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է վճարել 300,000 ՀՀ դրամ, որից կանխավճար 150,000 ՀՀ դրամ, պայմանագրի կնքումից եռօրյա ժամկեպում, իսկ մնացած 150,000 ՀՀ դրամ գումարը վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց, եռօրյա ժամկետում:

Հայցվորի ներկայացուցիչը կազմել և ստորագրել է հայցադիմում, որին կցվել են հայցվորի տիրապետության ներքո գտնվող ապացույցները, ներկայացրել է դիրքորոշում, այլ անձանցից ապացույցներ ձեռք չեն բերվել, փաստաբանը չի մասնակցել դատական նիստին (գործը քննվել է գրավոր ընթացակարգով), հաշվի առնելով գործի բարդությունը, գործի շուրջ փաստաբանի կողմից մատուցված ծառայությունները, ելնելով վեճի էությունից և դրա առանձնահատկությունից, Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության ողջամիտ գումարը 100,000 ՀՀ դրամ է: Հետևաբար հայցվորի՝ 300,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի ողջամիտ վարձատրության գումար, բռնագանձելու պահանջը ենթակա է բավարարման մասնակի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պետական տուրքից և փաստաբանի վարձատրությունից զատ այլ դատական ծախսեր չկան, Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 27.11.2023 թվականի թիվ ՆՄԲԿ- ԳՀԱՊՁԲ-24/11-1 որոշումը:

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից հօգուտ «Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

բռնագանձել 150,000 ՀՀ դրամ, որից 50,000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար, 100,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

«Աննարկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ 200,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու պահանջ մասով, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Վճիռը «___» «_____» 2024 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ